Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 12 (375) 1-17 հուլիս, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Արցախը միջազգային քաղաքական բեմահարթակում

Արցախի Հանրապետության նախագահի այցը Մեծ Բրիտանիա քննարկման ու տարատեսակ վերլուծությունների տեղիք տվեց:

Բնականաբար, անհանգստացած է ադրբեջանական կողմը, քանզի, անկախ այցի ձեւաչափից, մեր հարեւաններն այն ընկալում են որպես Արցախի միջազգային ճանաչմանն ուղղված առաջընթաց քայլ:

Փաստացի, Մեծ Բրիտանիան անուղղակիորեն երկխոսության դուռ է բացում մեր հանրապետության իշխանությունների առաջ:

Չաթըմ Հաուս-ում Արցախյան հիմնախնդրին նվիրված միջոցառման մասնակցությունը, եւ նախագահի՝ որպես Արցախի Հանրապետության գերագույն իշխանության ներկայացուցչի ելույթը, ինչպես նաեւ պաշտոնական մի շարք հանդիպումները, հիրավի, աննախադեպ կարելի է համարել: Ոչ միշտ ու ոչ բոլոր պետությունների ղեկավարներին /էլ չենք խոսում չճանաչված պետությունների մասին/ առիթ է ընձեռվում հյուրընկալվել Չաթըմ Հաուսի նման հեղինակավոր կառույցում եւ այնքան էլ էական չէ, թե այսօր այցը որքանով է կրում պաշտոնական բնույթ: Այսպես, թե այնպես, նման այցերը չեն շրջանցում մեծ քաղաքականությունը եւ այս պարագայում որեւէ մեկի համար կարեւոր չէ, թե Միջազգային հարաբերությունների արքայական ինստիտուտում (Chatham House) ելույթ ունեցող երկրի ղեկավարը ինչ ձեւաչափով է Մեծ Բրիտանիա մեկնել:

Հակառակ բոլոր տեսակի ճնշումների՝ Բ.Սահակյանը միջազգային բարձր հարթակում ներկայացրել է արցախյան հիմնախնդիրն ու պաշտոնական Ստեփանակերտի դիրքորոշումները խնդրի շուրջ:

Նախագահի այցը համարվում է կայացած: Այն կարեւոր իրադարձություն էր եւ, բնականաբար, պետք է համարել որպես Արցախի միջազգային ճանաչմանն ուղղված որոշիչ քայլ: Ակնհայտ է, որ Արցախի՝ որպես ինքնիշխան ու անկախ հանրապետության ձայնը սկսում է լսելի դառնալ աշխարհում: Անկասկած, այցը կնպաստի Արցախ-Մեծ Բրիտանիա համագործակցության սերտացմանը եւ ազդեցություն կունենա արցախյան հիմնախնդրի վերաբերյալ միջազգային հանրության մոտեցումների վրա:

Այս ամենի արդյունքը կերեւա արցախյան հիմնախնդրի շուրջ ապագա զարգացումներից: Հստակ է, որ նման մակարդակի այցերը չեն կարող հենց այնպես կազմակերպվել: Սա է հենց Բաքվին մտահոգող ու հիստերիայի դրդող հիմնական պատճառը, քանզի այս իրադարձությունը կատարվել է համաշխարհային քաղաքականություն կերտող եւ ուղորդող երկրում՝ Մեծ Բրիտանիայում:

Մեկ բան այլեւս անշրջանցելի է՝ տարբեր մակարդակներով եւ տարբեր ձեւաչափով սկսված է ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացը:

Արցախի հանրապետության պատվիրակության հանդիպումներ է ունեցել Մեծ Բրիտանիայում

Հուլիսի 6-9-ը Արցախի Հանրապետության պատվիրակությունը՝ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ, աշխատանքային այցով ժամանել էր Մեծ Բրիտանիա: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Արցախի պետականաշինությանը, ներքին եւ արտաքին քաղաքականությանը, Արցախ-Սփյուռք համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

Նախագահ Սահակյանը Լոնդոնում հանդիպում է ունեցել Հայ համայնքային խորհրդի անդամների հետ եւ քննարկել տեղի հայ համայնքի ու Արցախի միջեւ կապերի զարգացմանն առնչվող հարցեր: Լոնդոնի Գոլդսմիթ Հոլլ դահլիճում մասնակցել է Մեծ Բրիտանիայի Հայ համայնքային խորհրդի ճաշկերույթին եւ հանդես եկել ելույթով:

Այցի շրջանակներում՝ Բ. Սահակյանը Լոնդոնում հանդիպումներ է ունեցել հայ ավանդական կուսակցությունների՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության, Սոցիալ-Ժողովրդավարական հնչակյան կուսակցության, Ռամկավար ազատական կուսակցության՝ Մեծ Բրիտանիայի կառույցների ղեկավարների եւ ներկայացուցիչների հետ, ինչպես նաեւ հանդիպել է Հայ օգնության միության, Համազգային մշակութային միության, Հոմենեթմենի Մեծ Բրիտանիայի կառույցների ներկայացուցիչների հետ՝ բարձր գնահատելով վերոհիշյալ համահայկական կազմակերպությունների դերակատարությունը Սփյուռքում հայ ազգային ինքնության պահպանման, հայրենիքի հետ կապերի ամրապնդման եւ ազգային խնդիրների լուծման գործում:

Արցախի պատվիրակության լոնդոնյան հանդիպումների շրջանակում առանձնացել է հուլիսի 8-ին Chatham House-ում՝ Միջազգային հարաբերությունների արքայական ինստիտուտում Արցախյան հիմնախնդրին նվիրված միջոցառումը, որտեղ նախագահը հանդես է եկել Արցախի ու հիմնախնդրի մասին պատմող ելույթով: Իր ելույթում Սահակյանը նշել է, որ Արցախին հոգեհարազատ է Չաթըմ Հաուսի կարգախոսը՝ «Օգնել՝ կառուցելու անվտանգ, բարեկեցիկ եւ արդար աշխարհ» հավելելով, որ այս գաղափարներն առկա են նաեւ մեր աշխարհընկալման մեջ: Նրա խոսքով՝ նման հանդիպումներն օգտակար են թե Արցախի, թե տարբեր պետությունների եւ միջազգային կառույցների համար:

Հանդիպմանը ներկա են եղել օտարերկրյա դիվանագետներ, գիտնականներ եւ վերլուծաբաններ:

Այցելելով Մեծ Բրիտանիայի խորհրդարան՝ Բ. Սահակյանն անդրադարձել է Արցախի պետականաշինությանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Նրա բնութագրմամբ՝ Արցախը շահագրգռված է խորհրդարանական կապերի խորացման, գիտակրթական եւ մարդասիրական ոլորտներում Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների զարգացման մեջ:

Ստեփանակերտի կենտրոնի անտունները

Ստեփանակերտ, Վերածննդի հրապարակ, ԱԺ շենք, հյուրանոցներ, օր օրի ավելացող նորակառույց շքեղ ռեստորաններ, բնակարաններ, առանձնատներ: Իսկ հրապարակից մի քանի քայլ ներքեւ՝ Նելսոն Ստեփանյան 34 հասցեում, մեկ այլ տեսարան է...

Կարդացեք 4-րդ էջում

ՀՅԴ ճամբարները որպես կամուրջ Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ

ՀՅԴ-ի կողմից իրականացվող երիտպատանեկան ճամբար-բանակումների ծրագիրը մեկնարկել է 1993-թվականից, երբ Արցախում պատերազմը դեռ ավարտված չէր: Ճամբարների կազմակերպման առաջին տարիների հիմնական նպատակն էր՝ Արցախի պատանիների համար...

Կարդացեք 7-րդ էջում

Կառավարությունը հաստատել է պետական կառավարչական մի շարք հիմնարկների կանոնադրություններն ու աշխատակազմերի կառուցվածքը

Հուլիսի 14-ին տեղի է ունեցել կառավարության հերթական նիստը:

Կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, պետական նոր կառավարչական հիմնարկների կազմավորմամբ պայմանավորված, նիստում հաստատվել են «ԼՂՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմ», «ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ», «ԼՂՀ կառավարության աշխատակազմ» եւ «ԼՂՀ կրթության, գիտության եւ սպորտի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկների կանոնադրություններն ու աշխատակազմերի կառուցվածքը: Փոփոխությունները զուգորդվել են հաստիքների կրճատումներով եւ ֆինանսական միջոցների տնտեսմամբ:

«Կառուցվածքային վերջին բարեփոխումների արդյունքում՝ կատարվում են կրճատումներ, եւ մենք նպատակ ունենք, օպտիմալացնելով պետական կառավարման համակարգը, բարձրացնել դրա արդյունավետությունը: Բարեփոխման ընթացքը շարունակական է լինելու առաջիկա տարիներին, որպեսզի համակարգն աստիճանաբար համապատասխանեցնենք մեր հանրապետության պահանջներին: Դրան զուգահեռ՝ մենք պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որ կրճատվող քաղաքացիները հնարավորություն ունենան աշխատելու տնտեսության մեջ»,- նշել է վարչապետը:

Անդրադառնալով պետական կառավարման համակարգի ծախսերի կրճատմանը՝ Ա. Հարությունյանը հանձնարարել է աստիճանաբար կրճատել ծառայողական մեքենաների քանակը: Գործադիր մարմնի ընդունած երեք որոշում առնչվում է օրգանական գյուղատնտեսության ոլորտին: Սահմանվել է օրգանական գյուղատնտեսության կազմակերպման, բույսերի եւ բուսական ծագման մթերքի, գյուղատնտեսական կենդանիների եւ անասնապահական ծագման մթերքի արտադրության, օրգանական եղանակով վերամշակման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման, իրացման եւ մակնշման կարգը: Կառավարության անդամների հավանությանն են արժանացել նաեւ ոլորտում համապատասխանության սերտիֆիկատ տալու կարգը եւ արտադրանքի համապատասխանության նշանի, սերտիֆիկատի ու օրգանական գյուղատնտեսության արտադրության մեթոդի համապատասխանության սերտիֆիկատի ձեւերը, որոնցով հստակեցվում է տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:

Կառավարության ընդունած որոշմամբ սահմանվել են ԼՂՀ-ում օրգանական գյուղատնտեսության անցումային շրջանի տեւողությունը եւ լիազոր մարմնի որոշման միջոցով դրա կրճատման կամ երկարաձգման կարգը:

Մարտունու շրջանի մի շարք համայնքներում բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնման, անասունների համար կերային բազայի ապահովման եւ գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքի բարելավման նպատակով կառավարության կողմից հաստատվել է Մարտունու շրջանի մի շարք համայնքներում բազմամյա խոտաբույսերի մշակության 2015 թվականի ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է շրջանի մոտ 17 համայնքներում 220 հա տարածք մշակել: Այդ նպատակով հատկացվելու է շուրջ 7 մլն դրամ գումար:

Կառավարության անդամների հավանությանն է արժանացել նաեւ հանրապետության համայնքներում 2015-2016թթ. հողօգտագործողներին թթենու տնկիների տրամադրման ծրագիրը, որով նախատեսվում է թթագործության կայուն եւ հետեւողական զարգացման համար նախադրյալներ ստեղծել եւ գյուղատնտեսության ոլորտում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման արդյունքում աստիճանաբար բարելավել բնակչության կենսապայմանները: Երկու տարվա ընթացքում 40 մլն դրամ է հատկացվելու ծրագրի իրագործման համար: Մասնավորապես, Սիրիայի Արաբական Հանրապետությունից ձեռք են բերվելու 1-2 տարեկան թթենու բարձրորակ տնկիներ:

Կառավարության նախկին որոշումներից մեկում արված փոփոխությամբ՝ խստացվել է ենթակայգիզային ապրանքների իրացման նկատմամբ հսկողությունը: Նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից արգելել ԼՂՀ տարածք ներմուծված (այդ թվում՝ ՀՀ-ից) «2011» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը:

Գործադիրը որոշում է ընդունել ստոմատոլոգիական պոլիկլինիկաների, կաբինետների եւ կենտրոնների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական եւ մասնագիտական որակավորման նոր պահանջների ու պայմանների մասին: Հիմնական փոփոխությունները վերաբերում են բժշկական օգնության եւ սպասարկում իրականացնող ստոմատոլոգիական կենտրոնների, պոլիկլինիկաների եւ կաբինետների սարքավորումների եւ գործիքների հագեցվածության վերանայմանը, կրճատմանը, տեխնիկական պահանջների ու պայմանների պարզեցմանը:

Կառավարությունը սահմանել է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի իրականացման լիցենզավորման կարգերը եւ այդ գործունեությունների լիցենզիաների ձեւերը:

Նիստում հստակեցվել են զոհված եւ մահացած զինծառայողների ընտանիքների անդամներին պարգեւավճար նշանակելու պայմանները, ուժը կորցրած են ճանաչվել անձի դիմումի հիման վրա նախկինում նշանակված կենսաթոշակը պարգեւավճարով փոխարինելու հետ կապված կետերը, ինչպես նաեւ հստակեցվել է 2 կամ ավելի պարգեւավճար ստանալու իրավունք ունեցող քաղաքացիներին՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին մեկ պարգեւավճար վճարելու պայմանը:

Մեկ այլ որոշմամբ՝ նոր ձեւով կանոնակարգվել է կադաստրային քարտեզների ծածկագրման գործընթացը: Մասնավորապես, գծային ինժեներական ենթակառուցվածքների համար կկիրառվեն միանիշ հայերեն կոդային նշանակումներ, որոնք կպատկերվեն գծային ենթակառուցվածքի սկզբնատառով:

Նիստում հավանության է արժանացել ԼՂՀ պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման կարգը, ինչի համաձայն՝ ԼՂՀ-ում կիրականացվեն համալիր գնահատման աշխատանքներ:

Նոր դիվանագիտական աստիճաններ սահմանելու, դիվանագիտական աստիճանների դասակարգման, մասնավորապես, երկրորդ քարտուղարի աստիճանի տրոհմանը վերաբերող դրույթների, դրանց շնորհման ժամկետները հստակեցնելու անհրաժեշտությունից ելնելով՝ գործադիր մարմինը փոփոխություններ եւ լրացումներ է առաջարկել «Դիվանագիտական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքում:

Կառավարության հավանությանն է արժանացել «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որով առաջարկվում է կարգավորել սպորտի ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներ: Նախագծով տարանջատվում են ԼՂՀ կառավարության՝ սպորտի ոլորտի լիազոր պետական մարմնի լիազորությունները, ինչով պայմանավորված՝ կբարձրացվի համակարգի կառավարման արդյունավետությունը, ինչպես նաեւ համակարգված կդառնան սպորտային պետական քաղաքականությանն ուղղված միջոցառումները:

Օրինագծերը կներկայացվեն ԱԺ-ի քննարկմանը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Արցախում արձանագրվել է բերքատվության աննախադեպ ցուցանիշ

Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքն այս պահին գտնվում է ավարտման փուլում: Ընդհանուր բերքահավաքի ենթակա տարածքից 45 417 հա-ից առ այսօր հավաքված է 40 427 հա:

Այս մասին «Ապառաժ»-ի թղթակցի հետ զրույցում ասել է ԼՂՀ գյուղնախարարության բուսաբուծության եւ բույսերի պաշտպանության բաժնի պետ Վիլեն Ավետիսյանը եւ ընդգծել, որ ընդհանուր համախառն բերքը կազմել է 109 945 տոննա, միջին բերքատվությունը կազմում է 27.2 ցենտներ մեկ հա-ից:

Հիշեցնենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ հուլիսի 14-ի համեմատ, արձանագրվել է մոտավորապես 2,5 անգամ աճ: Անցած տարի համախառն բերքը կազմել է 42 245 տոննա, միջին բերքատվությունը՝ 10.1 ցենտներ մեկ հա-ից:

Վիլեն Ավետիսյանը նաեւ տեղեկացրել է, որ բոլոր մշակաբույսերի առումով արձանագրվել է աճ: Առանձին մշակաբույսերի մասով՝ հնձված է 21 432 հա ցորեն, 17693 հա գարի, 1300 հա հաճար, համախառը բերքատվությունը կազմել է՝ 60814 տոննա ցորեն, 45573տ գարի, 3557տ հաճար:

«Ապառաժ»-ի այն հարցին, թե արդյո՞ք գյուղնախարարությունը քայլեր է ձեռնարկել այս տարի կոմբայնների քանակի ավելացման համար, քանի որ գյուղացիները բողոքում են, որ կոմբայնների պակասի պատճառով չեն հասցնում ժամանակին կազմակերպել բերքահավաքը, ԼՂՀ գյուղնախարարության բուսաբուծության եւ բույսերի պաշտպանության բաժնի պետը պատասխանել է, որ աշխատող կոմբայնների քանակը բավարար է առկա ցանքատարածություններում բերքահավաք կատարելու համար: Խնդիրը դրանց ոչ ռացիոնալ օգտագործման մեջ է:

«ԼՂՀ գյուղնախարարության ծրագրով՝ հանրապետությունում գյուղտեխնիկայի պարկի թարմացման խնդիրը դրված է. այս տարի նման հարցեր լուծվել են: Բերքահավաքի նախօրեին եւ ընթացում ներ են մուծել նոր՝ արտասահմանյան, հիմնականում գերմանական արտադրության կոմբայններ, անմիջապես տրամադրվել շրջաններին եւ ներգրավել բերքահավաքի աշխատանքներին: Գործընթացը կրում է շարունակական բնույթ: Գալիք տարիներին կշարունակվեն ներմուծվել նոր կոմբայններ»,- նշել է Վիլեն Ավետիսյանը:

Այս տարի մշակաբույսերի ցանքատարածություններում հրդեհների քանակը եւս ռեկորդային էր. նախնական տվյալներով՝ հրդեհվել է 700-750 հա ցանքատարածություն:

Վիլեն Ավետիսյանի խոսքերով՝ բոլոր շրջաններում հրդեհներ եղել են, գրանցվել են բերքի կորուստներ: Հրդեհների հիմնական պատճառը մարդկային գործոնն է: Նշենք, որ սահմանամերձ շրջաններում եղել են հիմնականում հակառակորդի կողմից կանխամտածված հրկիզումներ:

Չնայած այն հանգամանքին, որ արգելված է ցանքատարածությունների հրկիզումը բերքահավաքից հետո, այնուամենայնիվ, շատ գյուղատնտեսներ, անտեսելով այդ հանգամանքը, բերքահավաքից հետո հրկիզում են այն՝ հաշվի չառնելով թե՛ բնապահպանական մի շարք հարցեր, թե՛ չհնձված ցանքատարածություններ հրդեհի տարածման ռիսկը:

Վիլեն Ավտիսյանը նշեց, որ առաջիկայում կստեղծվի հանձնաժողով, որն էլ կմշակի փոխհատուցման կամ որեւէ այլ աջակցության համար համապատասխան տարբերակներ:

Գարու եւ ցորենի գների անկումը Վիլեն Ավետիսյանը պայմանավորում է շուկայում առաջարկի բարձրացման հետ:

«Եթե շուկայում առաջարկը շատ է, ապա դա որոշակի ազդեցություն է ունենում գների վրա: Սակայն կառավարությունը ԼՂՀ Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով փորձել է որոշակիորեն կարգավորել գները՝ ցորենի համար հաստատելով 125-135 դրամ, իհարկե, եթե որակական չափանիշները համապատասխանում են, իսկ գարու համար՝ 109 դրամ, որոնք, կարծում եմ, նորմալ գներ են»,- ավելացրեց նա:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

ԱՄՆ սենատի հանձնաժողովն աջակցել է ՀՀ եւ ԼՂՀ ֆինանսական օգնության ծրագրին

ԱՄՆ Սենատի հատկացումների հանձնաժողովը հուլիսի 9-ին՝ 2016թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ, միացել է սենատոր Մարկ Քիրքին եւ աջակցություն հայտնել Լեռնային Ղարաբաղին անմիջական օգնություն տրամադրելու ծրագրին: Այս ծրագրի շրջանակներում ԼՂՀ քաղաքացիներին մարդասիրական օգնություն է ցուցաբերվում 1998-ից: Այս մասին տեղեկացնում է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի մամուլի ծառայությունը:

«Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել սենատոր Մարկ Քիրքին՝ Լեռնային Ղարաբաղին օգնության ծրագրին աջակցելու համար: Այդ ծրագիրը օգնում է բավարարել առօրյա մարդասիրական կարիքները եւ հանդիսանում է Արցախի քաղաքացիների ժողովրդավարական ձգտումների նկատմամբ ամերիկյան համերաշխության հզոր դրսեւորում: Մենք շատ ուրախ ենք, որ նման կարեւոր հարցում սենատոր Քիրքը կարողացել է նման հաջող աշխատանք տանել նախագահ Գրեմի եւ այլ գործընկերների հետ»,- ասել է ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանը:

2016թ. ֆինանսական տարում պետական եւ արտասահմանյան գործողությունների մասին օրինագծին կից զեկույցում մասնավորապես ասվում է. «Հանձնաժողովը կոչ է անում օգնություն տրամադրել ղարաբաղյան հակամարտության զոհերին՝ անցյալ տարիների օգնության չափին համապատասխան, ինչպես նաեւ հակամարտության հետ կապ ունեցող ընթացիկ կարիքների բավարարման համար: Հանձնաժողովը հետեւողականորեն կոչ է անում հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով»:

Բացի այդ, օրենսդիրները զեկույցում ընդգծել են Լեռնային Ղարաբաղի ներքին՝ ոչ սահմանամերձ շրջաններում, այդ թվում՝ նախկինում փակ համարվող գյուղատնտեսական հողերի եւ բնակելի շրջաններում, ականազերծմանն ուղղված ջանքերի շարունակականության կարեւորությունը: «Հանձնաժողովն ընդունում է, որ Լեռնային Ղարաբաղում ականների պատճառով բնակության մեկ շնչին բաժին ընկնող դժբախտ դեպքերի ցուցանիշն

աշխարհում ամենաբարձրներից մեկն է, եւ որ ականազերծման ծրագրերը արդյունավետ են եղել այն վայրերում, որտեղ անցկացվել են: Հանձնաժողովն անհանգստացած է տարածաշրջանում ականազերծման գործունեության տարածքային սահմանափակումների հանգամանքից եւ խորհուրդ է տալիս շարունակել այդ ծրագրերի ֆինանսական եւ աշխարհագրական ընդլայնումը»,- նշել են սենատորները:

Ի հեճուկս կոնկրետ երկրների համար օգնության մակարդակ չսահմանելու միտումների՝ Հատկացումների հանձնաժողովը հանդես է եկել կոնկրետ առաջարկներով՝ Հայաստանին 20.06 մլն դոլարի չափով օգնություն տրամադրել, 1.7 մլն դոլար հատկացնել արտասահմանյան ռազմական ֆինանսավորման շրջանակներում եւ 600 հազար դոլար՝ ռազմական կրթության եւ պատրաստության շրջանակներում: Ինչպես նաեւ՝ առաջարկվում է Ադրբեջանին եւ Վրաստանին համապատասխանաբար 8.778 մլն դոլար եւ 54 մլն դոլար տնտեսական օգնություն ցուցաբերել: Նախորդ տարիների օրինակով Սենատին կոչ է արվել ապահովել Հայաստանին եւ Ադրբեջանին հատկացվող օգնության համահավասարությունը:

Զեկույցում հատուկ հիշատակում է պարունակվում այն մասին, որ Հատկացումների հանձնաժողովը անհանգստացած է Ադրբեջանում մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ կաշառակերության ոլորտում տիրող իրավիճակից, եւ կոչ է անում Պետական դեպարտամենտին՝ իր ջանքերի մասին զեկույց ներկայացնել, որի նպատակն է՝ հասնել Ադրբեջանում խղճի բանտարկյալների ազատմանը:

Սիրիայում շարունակվող ճգնաժամի կապակցությամբ Հատկացումների հանձնաժողովն առաջարկում է 195 մլն դոլար օգնություն հատկացնել երկրի ներսում տեղահանված, եւ լրացուցիչ գումարներ՝ Հորդանանի, Լիբանանի եւ Թուրքիայի փախստականների համար: Այդ երկրների թվում չի հիշատակվում Հայաստանը, որտեղ տարբեր գնահատականներով հաստատվել է 17 հազար սիրիացի:

Հիշեցնենք, որ հունիսին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Հատկացումների հանձնաժողովը 2016թ. ֆինանսական տարվա պետական բյուջեի իր տարբերակում չէր նշել Կովկասյան երկրներին հատկացվող օգնության չափը: Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի նիստերում համապատասխան նախագծերի քննարկումից հետո Կոնգրեսի 2 պալատում պլանավորվում է խորհրդակցություն հրավիրել, որպեսզի կարգավորեն տարաձայնությունները եւ համաձայնեցված տարբերակն ուղարկեն ԱՄՆ նախագահի հաստատմանը: Սակայն, եթե նրանք չկարողանան համաձայնության գալ այդ խորհրդակցությունների ժամանակ, պալատների ղեկավարները կարող են արտասահմանյան օգնության ծախսերը ներառել ծախսերի ավելի խոշոր նախագծերի մեջ:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅԴ Լիբանանի հայ Դատի հանձնախումբն այցելել է Լիբանանում Ավստրիայի դեսպանատուն

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի հանձնախումբը ներկայացնող պատվիրակությունը նախօրեին այցելել է Լիբանանում Ավստրիայի դեսպանատուն, ուր հանդիպում է ունեցել դեսպան Ուրսուլա Ֆերինկրի հետ: Պատվիրակությունը դեսպանին ներկայացրել է Հայ դատի մարմինների տարաբնույթ աշխատանքները եւ, հատկապես, Լիբանանի Հայ դատի մարմնի առաջադրանքները: Նրանք նաեւ Ավստրիայի խորհրդարանին շնորհակալություն են հայտնել Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Նշենք, որ 2015 թվականի ապրիլի 22-ին Ավստրիայի խորհրդարանը, խորհրդարանի նախագահ Տորիս Պյուրեսի առաջարկով, հարգել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Նիստի ընթացքում խորհրդարանի քաղաքական վեց կուսակցությունների ղեկավարները հանդես են եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչող միացյալ հայտարարությամբ:

Դեսպանը կարծիք է հայտնել, որ

Ավստրիան, իբրեւ Հայոց ցեղասպանության հիմնական ականատես ու իրազեկ պետություն, վաղուց պետք է ճանաչած ու դատապարտած լիներ այն:

ՀՅԴ Լիբանանի Հայ դատի հանձնախումբը ներկայացնող պատվիրակությունը հույս է հայտնել, որ առաջիկայում Հայոց ցեղասպանության ճանաչումը Ավստրիայում կամրագրվի նաեւ օրինագծով:

Կողմերը մտքեր են փոխանակել հայ-թուրքական հարաբերությունների, Թուրքիայում առկա քաղաքացիական գործընթացների, Հայոց ցեղասպանության՝ Թուրքիայի կողմից ճանաչման, ինչպես նաեւ ցեղասպանությունների եւ մարդկության դեմ ոճիրների կանխարգելման շուրջ:

Հանդիպման ավարտին պատվիրակությունը դեսպան Ֆերինկրին շնորհակալական պաշտոնական նամակ, Հայոց ցեղասպանության մասին պատմագիտական հատոր եւ հայ մշակութային ժառանգությանն անդրադարձող գիրք է հանձնել:

Առաջիկայում ՀՅԴ Լիբանանի Հայ դատի հանձնախումբը նմանատիպ այցելություններ կունենա նաեւ Բրազիլիայի եւ Լյուքսեմբուրգի դեսպանություններ:

«ԱՊԱՌԱԺ»

«Սոցինտերնը» քայլեր կձեռնարկի Հայոց ցեղասպանության ճանաչման համար

Աշխարհի սոցիալիստական կուսակցությունները միավորող Սոցինտերնի խորհուրդը Նյու Յորքում գումարած նիստում որոշել է քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Կազմակերպության գլխավոր քարտուղար Լուի Այալան տեղեկացրել է, որ երկօրյա քննարկումների արդյունքում՝ կառույցի անդամ ՀՅԴ եւ Թուրքիայի «Ժողովրդահանրապետական» կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ եկել են ընդհանուր համաձայնության՝ հաշվի առնելով վերջին շրջանում մի շարք ազգային խորհրդարանների եւ վերազգային հաստատությունների կողմից Ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը: Այալան ասել է, որ Ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում ցանկանում են կլոր սեղան կամ լսումներ կազմակերպել հետեւյալ հարցադրմամբ. «Արդյո՞ք Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն իրապես կհաշտեցնի Հայաստանին եւ Թուրքիային»:

Հայտարարությամբ հանդես է եկել ՀՅԴ Բյուրոյի անդամ Կիրո Մանոյանը՝ շեշտելով, որ այդ քննարկումը չպետք է լինի պատմական եղելության շուրջ, ինչը ցանկանում է Թուրքիան:

Նա ներկայացրել է այն բոլոր փաստարկները, թե ինչու համաշխարհային այնպիսի կազմակերպությունն, ինչպիսին «Սոցինտերն»-ն է, պետք է ակտիվ դիրքորոշում ունենա Հայոց ցեղասպանության դատապարտման արշավում:

Կիրո Մանոյանը նշել է, որ Թուրքիան մինչ այժմ շարունակում է ուրացման, ժխտման քաղաքականությունը, այդ թվում՝ փակ է պահում դեպի Հայաստան ցամաքային ճանապարհը:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտի կենտրոնի անտունները

Ստեփանակերտ, Վերածննդի հրապարակ, ԱԺ շենք, հյուրանոցներ, օր օրի ավելացող նորակառույց շքեղ ռեստորաններ, բնակարաններ, առանձնատներ: Իսկ հրապարակից մի քանի քայլ ներքեւ՝ Նելսոն Ստեփանյան 34 հասցեում, մեկ այլ տեսարան է, որը նույնիսկ կյանքում ամենալավ եւ ամենավատ բան տեսածի աչքին սարսափելի կթվար:

Հին ու ժանգոտած դարպասով ներս մտնելուն պես աչքի է զարնվում քանդված, առանց առաստաղի մի շինություն, որ լեզուդ անգամ չի պտտվում «տուն» անվանել: Արդեն մի քանի տարի է՝ ինչ տունը փլվել է, եւ տիկին Էմման իր 4 անչափահաս երեխաների՝ 16-ամյա Ալիսայի, 13-ամյա Տիգրանի, 11-ամյա Էրիկի եւ 6-ամյա Ալենի հետ ապրում է փլված տան հարեւանությամբ գտնվող թաքստոցի մեջ, որը եղբորն է պատկանում: Մեծ աղջիկն

ամուսնացած է, ապրում է Ստեփանակերտում:

Տան մուտքին Էմման հուզմունքով դիմավորեց մեզ, սակայն խնդրեց չլուսանկարել ոչ երեխաներին, ոչ էլ թաքստոցը, ուր բնակվում է իր անչափահաս զավակների հետ՝ պատճառաբանելով, որ ամաչում է այն բանի համար, որ հանկարծ կտեսնեն դստեր ամուսնու բարեկամները:

Երկար զրուցելուց հետո, այնուամենայնիվ, ներս թողեց: Կիսավեր, վառարանի ծխից սեւացած թաքստոցը երկու մասից է բաղկացած, ուր հազիվ մի քանի քառակուսի մետրի վրա տեղավորված է 3 փոքր մահճակալ: Տան միակ արժեքավոր առարկան փոքրիկ գունավոր հեռուստացույցն է, որը նվեր են ստացել, սակայն տան էլեկտրական լարերի անսարքության պատճառով այն չեն օգտագործում, ավելին՝ անսարք էլեկտրական լարերի պատճառով թաքստոցը մի քանի անգամ գրեթե հրդեհվել է:

Ընտանիքի միակ եկամուտը երեխաների նպաստն է, որը կազմում է 48 հազար դրամ: Արդեն մեկ տարուց ավելի է՝ տիկին Էմման հիվանդության պատճառով աշխատել չի կարողանում: Նա առողջական խնդիրներ ունի (ոտքերի երակների լայնացում), հազիվ է քայլում: Զավակները՝ 11- ամյա Էրիկը եւ 13 -ամյա Տիգրանը, քեռու հետ այստեղ-այնտեղ աշխատում են եւ օրվա հացի գումար վաստակում: Երբեմն շիշ կամ երկաթե խողովակներ են հավաքում, փոխանակում եւ ուտելիք գնում:

Բազմազավակ մայրը հաճախ բակի խանութից պարտքով հաց է գնում, իսկ երբ նպաստը ստանում է՝ փորձում է հնարավորինս մարել պարտքը: «Նպաստի մեծ մասը էլեկտրաէներգիայի եւ գազի վրա է ծախսվում»,- ասում է նա:

Մի քանի ամիս առաջ Արցախի հանրային հեռուստատեսությունը տիկին Էմմայի «տունն» էր նկարահանել՝ ներկայացնելով ընտանիքի վիճակը: Մի քանի օր անց պատկան մարմիններից ներկայացուցիչներ են եկել տունը տեսնելու, սակայն, ինչպես տիկին Էմման է ասում, միայն երեխաներին գիշերօթիկ դպրոց տանելու առաջարկ են հնչեցրել:

«Իմ եղած-չեղածն իմ զավակներն են. ինչպե՞ս կարող եմ նման առաջարկի հետ համաձայնել: Ես 52 տարեկան եմ, բավական ուշ եմ ամուսնացել: Պատճառը Ղարաբաղյան պատերազմն էր, քանզի եղբայրներս ռազմաճակատում էին, ես էլ հետեւում էի նրանց, օգնում էի տղաներին՝ ինչով կարողանում էի. մեկի վիրակապն էի փոխում, մյուսի հագուստն էի լվանում... Ամուսնացա պատերազմից հետո: Ունեցանք 5 զավակ: Սակայն ամուսինս լքեց ընտանիքը. չի էլ հիշում մեր մասին: Ես ու զավակներս մեր խնդիրների հետ մենակ ենք մնացել...»,- ասում է Էմման:

Ամառվա այս տոթին նույնիսկ ջուր չունեն. ջրի պարտքի պատճառով ջուրն անջատել են /ինչպես տեղեկացանք՝ պարտքը կազմում է 66.000 դրամ/: Հիմա խմելու ջուր երեխաները աղբյուրներից են բերում, որոնք բավականին հեռու են:

«Ցավում եմ, որ մեզ նման ընտանիքներ դեռ կան Ղարաբաղում: Ես չեմ սիրում ծայրահեղական հայտարարություններ անել, ոչ էլ պատրաստվում եմ կոտրվել կյանքի անարդարություններից: Այստեղ ծնվել եմ, այստեղ ել պիտի մեռնեմ: Սակայն, ցավոք, ոչ մեկն ապահովագրված չէ, որ վաղը չի հայտնվի իմ վիճակում...»- ասում է բազմազավակ մայրը:

Տիկին Էմմայի զավակները դպրոցում լավ են սովորում: Մայրը ցանկանում է, որ ապագայում նրանք բարձրագույն կրթություն ստանան, ոչ թե հանապազօրյա հացի խնդիր լուծեն:

Տիգրանը լավ է սովորում դպրոցում, փայտամշակման դասին միշտ ինքնաթիռ, փայտե թռչող սարքեր, ռոբոտներ է պատրաստում: Ասում է՝ ապագայում իրական ինքնաթիռներ պատրաստող է ցանկանում դառնալ:

«Ես մայր եմ, եւ որդիներիս միմիայն լավ ապագա եմ ցանկանում: Նրանց հույս եմ ներշնչում միշտ, որ ամեն ինչ լավ կլինի, սակայն թունելի վերջի լույսը ես ինքս չեմ տեսնում: Աչքիս առաջ մեծանում են երեխաներս՝ իրենց մեծ եւ փոքր երազանքներով, որոնք, վախենում եմ, այդպես էլ երազանքներ մնան: Այսօր ընտանիքիս ամենամեծ երազանքը բնակարան ունենալն է, ուր ամեն մեկը գոնե իր մահճակալն ու անկյունը կունենա»,- կիսվում է մեզ հետ Էմման:

Հ.Գ.-Մի քանի օր է՝ առիթ ունեցա անցնելու Ստեփանակերտի քաղաքապետարանի բոլոր բաժիններով՝ պարզելու թե կոնկրետ որ բաժինն է այցելել տիկին Էմմային եւ որեւէ որոշում կայացվե՞լ է նրա բնակարանային հարցի շուրջ: Օրեր անց պարզվեց, որ տիկին Էմմայի ընտանիքին այցելել են Ստեփանակերտի քաղաքապետարանի սոցիալական պաշտպանության եւ առողջապահության բաժնից: Արդյունքում՝ նրանց միանվագ օգնություն են ցուցաբերել՝ հագուստի եւ սննդի տեսքով: Իսկ արդյո՞ք բաժինը դիմել է համապատասխան մարմիններին հնարավոր համաճարակների տարածման (ընտանիքը մեկ տարի է խմելու ջուր չունի, բաղնիք, զուգարան չկա) վտանգը կանխելու համար, հետաքրքրվե՞լ է արդյոք նրանց բնակարանային խնդիրը լուծելու հարցով, անպատասխան մնաց: Բաժնում մեզ տեղեկացրին, որ իրավիճակը ներկայացրել են Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարին: Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գագիկ Նազլուխանյանի հետ հանդիպման ժամանակ նա հայտնեց, որ տունը ժամանակին անօրեն է կառուցվել եւ օրինական փաստաթղթեր չկան. ընտանիքն էլ բնակարան ստանալու արտոնություն չունի:

ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարության ընտանիքի եւ երեխաների հիմնահարցերի վարչությունը տեղյակ չէ այս ընտանիքի մասին: Վարչությունից տեղեկացանք, որ օգնություն տրամադրվում է միայն նրանց, ովքեր գրավոր դիմում են ներկայացնում նախարարություն:

ԼՂՀ երեխայի իրավունքի մասին օրենքի 3-րդ հոդվածում ասված է.

«Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները: Պետությունը համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց եւ հասարակական միավորումների հետ»:

Այս դեպքում հարց է ծագում՝ ո՞վ է պատասխանատվություն կրում այս 4 անչափահաս երեխաների ամեն օր խախտվող իրավունքների համար: Դեպի ու՞ր է տանում այս բարձիթողի վիճակը... Ու՞ր են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցները:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Մեր ուժը՝ Մարտունու Մերուժը

Դժվար է գրել ինչ-որ մեկի ճակատագրի մասին, երբ քեզ անհայտ են նրա ապրումները, սակայն երբ քո եւ նրա ճակատագրերի միջեւ գտնում ես նմանության եզրեր եւ զգում, որ դու կամ էլ քեզ հարազատ մեկը եւս ունեցել եք նման ապրումներ, ուղեղիդ բոլոր բջիջներով ընկալում ես ցավի ուժը, որ համակում է մարմինդ, հասնում սրտիդ, ստիպում մերթ ժպտալ, մերթ հուզվել…

Մոսիյանների տանը գտա կիսատ-ծվատ, ապրած-չապրած մանկության հետքեր. այդ հետքերն ամենուր էին. զավակների՝ Արմինեի, Հայկի, Մերուժանի աչքերում, պատերազմի տարիներից մնացած լուսանկարներում, ընտանեկան ալբոմում, նրանց մանկության հիշողություններում, անկեղծ զրույցներում… Դժվար է կորսված մանկության մեջ փնտրել հարազատ մեկի պատկերը եւ գիտակցել, որ այդ պատկերն այլեւս քեզ ոչ ոք չի վերադարձնի, որ այն, ինչ ունես, փոքրիկ մի հուշ է, որը մերթ կա, մերթ չկա…

«Հայրիկիս հետ կապված լոկ մի քանի հուշ ունեմ: Եղբայրս՝ Հայկը, շատ փոքր էր, իսկ կրտսեր եղբայրս՝ Մերուժանը, երբ ծնվեց, հայրս արդեն չկար: Մայրս նրան հորս անունով կոչեց: Լոկ ես եմ երեխաներից, որ հիշում եմ հայրիկին: Նրա հետ կապված հուշերս իմ ամենամեծ հարստությունն են, որ պահում եմ սրտումս: Այդ հուշերն ինձ թեւ են տալիս, չեն թողնում որեւէ բանից երկնչել կամ վհատվել…»,-ասում է Մերուժանի դուստրը՝ Արմինեն: Իսկ կինը՝ Գենյան, շտապում է սեղան բացել. «Մերուժը չէր սիրում, երբ որեւէ մեկը մեր տնից առանց հյուրասիրության հեռանար: Մեր սեղանը միշտ բաց էր մոտիկ-հեռավորի համար»,- ասում է:

Մերուժան Մոսիյան հրամանատարի մասին գիտեն ոչ միայն հայրենի Մարտունիում, այլեւ Արցախում ու Արցախից դուրս, քանզի նրանք, ովքեր ծանոթ են արցախյան պատերազմի պատմությանը, դժվար թե լսած չլինեն նրա հայրենանվեր կենսագրության մասին, քանզի նշանակալից էր նրա՝ որպես հրամանատարի, ու նրա տղաների ներդրումը Մարտունու շրջանի պաշտպանության ու ընդհանրապես Արցախյան գոյապայքարում: Մերուժանն ու նրա «տղաները» /այդպես էին նրանց կոչում/ ամենուր էին, Մարտունու բոլոր կողմերում, որտեղ թշնամին որեւէ ոտնձգություն էր ձեռնարկում: Երբ Մերուժն ու տղերքը երեւում էին, մարդիկ հանգիստ շունչ էին քաշում եւ ոգեշնչվում նրանց ներկայությամբ, հավատում, որ ամեն ինչ լավ է լինելու:

Շարժման առաջին իսկ օրերից անհանգիստ էր: Պատմության ֆակուլտետի ուսանողը շատ լավ հասկանում էր իրավիճակի իսկությունը, եւ ընկերների հետ անցնում է ընդհատակյա գործունեության: «Միասին հոսքային դասեր էինք անում: Ես բանասիրական ֆակուլտետում էի սովորում, նա՝ պատմական,- պատմում է տիկին Գենյան,- շատ լռակյաց երիտասարդ էր: Անտեղի չէր խոսում: Երբեմն անհետանում էր, երբեմն հայտնվում, սակայն դասերին միշտ պատրաստ էր, խելամիտ: Նրա կերպարը բացահայտվեց 4-րդ կուրսում, երբ սկսվեց Շարժումը: Բոլորին կոչ էր անում, որ միանան Շարժմանը, ասում էր՝ հրապարակը չպիտի դատարկ լինի, ամեն օր պիտի հավաքվենք, Արցախի ձայնը պետք է լսելի դարձնենք: Ուսանողներով մասնակցում էինք փետրվարյան ցույցերին. գիշերցերեկ այնտեղ էինք: Ընկերացանք: Բայց ոչ ես, ոչ նա՝ չգիտեինք, որ հետագայում միասին կլինենք: Այդ ժամանակ բոլորս տարված էինք Շարժման գաղափարով: Մի օր՝ ապրիլի 1-ին, հանկարծակի հայտնեց իր զգացմունքների մասին: Ես կատակի վերածեցի՝ մտածելով, որ ապրիլմեկյան կատակ է, սակայն ամեն ինչ իրական էր, փոխադարձ: Հակառակ պատերազմին՝ ամուսնացանք: Աշխատում էինք Մարտունու դպրոցում. Մերուժը պատմություն ու իրավագիտություն էր դասավանդում, նաեւ աշխատում էր «Ամարաս» թերթում, այնուհետեւ՝ Մարտունու կոմերիտշրջկոմում: Դասերից հետո նաեւ տուրիզմի խմբակ էր պարապում՝ դեռ այն ժամանակ գիտակցելով, որ երիտասարդները պետք է կարողանան զենքին տիրապետել, գոյատեւել դրսի պայմաններում, պատերազմական իրավիճակում: Այն ժամանակ արդեն ինքը հասկանում էր, որ լայնամասշտաբ պատերազմն անխուսափելի է, որ առանց զենքի հարցը լուծում չի ստանա: Առավոտյան դասի էր գնում, գիշերը տղերքի հետ հսկում էին Մարտունու սահմանները, զբաղվում զենք հայթայթելու գործով: Երբ հարցնում էի ստեղծված իրավիճակի մասին, ասում էր. «Սա մեր վերջին կռիվն է լինելու թշնամու դեմ: Պիտի հաղթենք: Այլապես՝ եթե պարտվենք, այս ծանր բեռը պիտի ընկնի մեր սերունդների ուսերին: Նրանք պիտի ստիպված լինեն ազատագրել մեր հողերը…» Նա կամավորների ջոկատ հավաքեց. սկզբում մի քանի հոգի էին, հետո ջոկատը վերածվեց վաշտի, միացան Աշանի, Խնուշինակի, Մաճկալաշենի եւ մի շարք այլ գյուղերի կամավորական ջոկատները: Մարտունու շուրջ հզոր պաշտպանություն ձեւավորվեց, որից թշնամին սարսափում էր: Առավոտյան Մերուժը շտապ տուն էր մտնում, վերցնում գրքերն ու շտապում դպրոց: Որպես երիտասարդ մասնագետի՝ տնօրենն ամեն օր լսում էր նրա դասերը, ու ամեն անգամ գովեստի խոսքեր էր ասում՝ սկզբում անգամ չգիտակցելով, թե Մերուժանը որտեղ է լինում գիշերները: Հետո, երբ իմացավ, խնդրեց, որ Մերուժն իրեն էլ անդամագրի ջոկատին, բայց մերժում ստացավ: «Չեմ կարող, իսկ ո՞վ պիտի դպրոցը ղեկավարի: Դուք շատ մեծ գործ եք անում՝ սերունդ եք կրթում»: Հետագայում երբ դպրոցական պարապմունքները նույնպես տեղափոխվեցին նկուղներ, դպրոցի տնօրենին ընդգրկեց իր գումարտակի կազմում»:

1989-ին ծնվեց առաջնեկը՝ Արմինեն: Մերուժանը հազվադեպ էր տանը լինում, բայց եղած ժամանակ դստերը դնում էր ծնկներին ու «Սասնա ծռեր» արտասանում: Փոքրիկ Արմինեն անգիտակցաբար, բայց ուշադիր լսում էր:

«Եկավ այն պահը, երբ ՕՄՕՆ-ը ռուսական բանակի հետ խուզարկություններ սկսեց Արցախում՝ զենք գտնելու նպատակով: Շրջանի պաշտպանության համար եղած զենքերը հարկավոր էր թաքցնել: Սկզբում անտառներում էին պահում, հետո էլ մեր տան մի սենյակում: Մերուժն ինձ սովորեցրեց զենքին տիրապետելու կանոնները, եւ գիշերն իրար հերթափոխելով, ինքնաձիգը ձեռքներիս՝ հսկում էինք սենյակը: Իսկ մինչ այդ՝ ինքնաձիգը գիշերները դնում էի Արմինեի տեղաշորի տակ: Մերուժանն ասում էր. «Գիտե՞ս, ՕՄՕՆ-ներն այնպիսի արարածներ են, որ մեծ-փոքր չեն նայում, կարող են տեղաշորի հետ երեխայի էլ շրջել՝ զենք գտնելու: Այնպես որ՝ եթե տանը մոտենան, պիտի ամեն կերպ պաշտպանվենք: Այստեղ ամբողջ շրջանի պաշտպանության համար եղած-չեղած զենք-զինամթերքն է: Սա շատ մեծ պատասխանատվություն է…»:

Մի օր իմացա, որ անդամագրվել է Դաշնակցությանը, կուսակցական գրականություն բերեց տուն: Երբեմն գրքերը տանում էր իր հետ՝ հնարավորության դեպքում կարդալու համար: 1992 թվականի սեպտեմբերի 1-ից ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի անդամ էր»:

Մերուժանը միաժամանակ զբաղվում էր նաեւ լրագրությամբ: Տեղեկատվական շրջափակման ժամանակ շրջանի գյուղերից իրավիճակի մասին հավաքագրված տեղեկությունները փոխանցում էր Դաշնակցության խողովակով՝ ներկայացնելով արցախյան իրականությունը, թշնամու ոտնձգությունները, հարձակումները: Գենյան հնարավորինս օգնում էր նրան: Նախ՝ ֆաքսով, հետո միայն հեռակապով փոխանցում էին տեղեկատվությունը:

«Հիշում եմ, երբ պիտի ծնվեր ավագ որդիս՝ Հայկը, վիճակը Մարտունիում ծանր էր: Նկուղային կյանքի պայմաններում դժվար չէր կռահել, թե ինչ էր նշանակում երեխա ունենալ, երբ ամուսինդ կռվի դաշտում է, իսկ քեզ շրջապատող մարդիկ պիտի իրենց կյանքը վտանգեն՝ քեզ նկուղային հիվանդանոց տեղափոխելու համար: Մերուժանը որոշեց ինձ ուղարկել Գորիս՝ ծնողներիս մոտ: Մերուժն ու Սերգեյը /Սերգեյ Շահվերդյան/ ինձ ճանապարհում էին: Թռիչքից առաջ հուզվեցի, Սերգեյը ժպտաց ու ասաց՝ մի մտածիր, շուտով վերադառնալու ես ազատագրված Լաչինով: Այդպես էլ եղավ: Մայիսի 17-ին Հայկը լույս աշխարհ եկավ, ժամեր անց՝ 18-ի գիշերը Լաչինն ազատագրվեց: Առաջին բանը, որ անցավ մտքովս, Սերգեյի խոսքերն էին: Ես գրկեցի երեխային եւ ուրախությունից լաց եղա… Մայիսի 18-ի գիշերը տղերքն ինձ այցի եկան ազատագրված Լաչինով…»:

Մերուժանին ճանաչողներն ասում են՝ նա ոչ միայն լավ հրամանատար էր, այլեւ՝ հավատարիմ ընկեր: Զոհված ընկերների ընտանիքներին երբեք աչքաթող չէր անում: Ամեն օր այցելում էր որեւէ մեկի ընտանիքին, ծանոթանում ընտանիքի հոգսերին, փորձում օգնել, աջակցել հնարավորինս:

Իսկ մարտերի ժամանակ շատ անգամ անհավատալի իրավիճակից ընկերներին կարողացել է հանել: Ընկերներից մեկը պատմում էր, որ Մարտակերտում ջոկատով շրջափակման մեջ էին հայտնվել: Դիրքն այնպիսին էր, որ հնարավոր չէր փրկվելու հույս անգամ ունենալ: Բայց Մերուժանի հնարամտության, ռազմական հնարքներին տիրապետելու մեծ ընդունակության շնորհիվ նրանք կարողացան անկորուստ դուրս գալ շրջափակումից: Հաջորդ ընկերը շարունակում է, որ ինքը վիրավորվել էր, եւ Մերուժանին խնդրում էր իրեն թողնել, մնացածներին գոնե հասցնել հանել շրջափակումից: Սակայն Մերուժանը ոչ միայն չի թողնում վիրավոր ընկերոջը՝ մյուսներին փրկելու տրամաբանությամբ, այլեւ անձամբ ինքը վիրավորին շալակած դուրս է հանում տեղանքից, որը բավականին հեռու է լինում:

Դողում էր ամեն մի ընկերոջ կյանքի, առողջության համար: Իր սիրելիներին, հարազատներին, մտերիմներին, ընկերներին, բոլորին նվիրված էր անմնացորդ: Համարյա չէր քնում, որ ամեն ինչ հասցներ: Ինչպես ընկերներն են պատմում՝ արդեն գիտեին, որ ամեն գիշեր պահակակետերի իրենց գիշերային այցելուն անպայման Մերուժանն էր… Անընդհատ ստուգում էր իրավիճակը: Ուզում էր վստահ լինել, որ ամեն պահակակետում ամեն ինչ նորմալ է, զինվորները քնած չեն եւ այլն…

«Ազատ ժամանակ չէր ունենում, երբ ես կամ ընկերները ինչ-որ բան էինք հարցնում, անընդհատ ասում էր՝ միլիոն գործ ունեմ, միլիոն… Սկզբից չէի հասկանում, հետո արդեն ինձ համար պարզ էր, որ, իրոք, բոլորը նրա խոսքին ու խորհրդին են սպասում, զօր ու գիշեր զբաղված է, պիտի ամեն ինչ ճիշտ ժամանակին անի, մարդիկ նրան ապավինում ու հավատում էին…»,- ասում է կինը եւ հավելում, որ դուստրը՝ Արմինեն, շատ էր կապված հոր հետ: Ամեն օր փախչում էր տնից հորը տեսնելու համար: Ինքը՝ Արմինեն էլ աղոտ հիշողություններ ունի. «Հիշում եմ՝ գումարտակը տեղակայված էր Մարտունու դպրոցում: Ես մայրիկից թաքուն փախչում էի տնից, անցնում ճանապարհն ու թաքուն մտնում դպրոց: Այնտեղ կապավոր կանայք կային, ովքեր սիրով ընդունում էին ինձ: Ես հետաքրքրությամբ հետեւում էին նրանց աշխատանքին, երբեմն հեռակապով ես էլ էի տղերքի հետ ինչ-որ բան թոթովում, ու նրանք աշխուժանում էին: Երբ հայրիկը ներս էր մտնում, թաքնվում էի սեղանի տակ, որպեսզի չբարկանա, որ փախել եմ տնից,- պատմում է Արմինեն: - Նման միջադեպ արդեն եղել էր, երբ գումարտակ վազելու ճանապարհին շունը հետեւիցս էր ընկել, եւ ես՝ 2-3 տարեկան փոքրիկս, թողնելով կոշիկներիցս մեկը՝ լացելով հասել էի գումարտակ»:

Մարտունու շրջանի մոտոհրաձգային գումարտակի հրամանատար Մերուժան Մոսիյանի մարտական ուղին բավականին ընդգրկուն է՝ Մարտունի, Քելբաջար, Կուբաթլու, Մարտակերտ, Աղդամ, Ֆիզուլի, Մարզիլի… Մարզիլին եղավ նրա խաչատեղին, քանզի այնտեղ՝ 1993 թվականի օգոստոսի 23-ին, ընկերների՝ Միեր Զուլհաճյանի, Արտակ Մնացականյանի, Լեւոն Համբարձումյանի եւ Ռուդիկ Ավագյանի հետ մահաբեր ականի պայթյունից անմահանում են՝ իրենց սրտերում տանելով Արցախի ազատագրման ու Միացյալ Հայաստանի երազանքը…

Այդ օրը լրանում էր Մերուժանի եւ Գենյայի ամուսնության 5-րդ, իսկ Միերի եւ Կարինի ամուսնության՝ 1-ին տարին: Նախորդ օրը խոստացել էր, որ մի քիչ շուտ տուն կգան, որ ամուսնության տարեդարձ նշեն…

Մերուժանը չհասցրեց տեսնել կրտսեր որդուն, սակայն գիտեր, որ զավակ պիտի ունենան, եւ հավատացած էր, որ նա հաղթանակի ծնունդ պիտի լինի… Այդպես էլ եղավ: 1994 թվականի մայիսի 14-ին ծնվեց որդին, որին կինը Մերուժան կոչեց: Հոր հաղթական անունն ու հաղթական երազանքը փոխանցվեց որդուն: Ասել է թե՝ հերոսների գործը կտակվեց սերունդներին՝ Միերներից Միերներ, Արմենյաներից Արմենյաներ, Մերուժաններից Մերուժաններ…

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Արցախի պատանիները, կարծես, Հունաստան եկած դեսպաններ լինեն. Խ. Խաչատուրյան

Այս տարի լրանում է «Արցախի երեխաների այցը Հունաստան» ծրագրի 20-ամյակը:

Ծրագիրը կյանքի է կոչվել ՀՅԴ Հունաստանի Հայ դատի հանձնախմբի ջանքերով, իսկ ծրագրի պատասխանատուն ՀՅԴ անդամ, Հայ դատի հանձնախմբի անդամ Խաչիկ Խաչատուրյանն է:

Օրերս Խաչիկ Խաչատուրյանը այցելել է Արցախ: Մեր թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ Խաչիկը ներկայացրել է ծրագրի նախապատմությունը: Նա նշել է, որ պատերազմը դեռ չավարտված՝ 1993 թվականին, այցելելով Արցախ եւ տեսնելով ծնողներ ու հարազատներ կորցրած երեխաներին՝ շատ է հուզվել. նպատակ է դրել բարի գործ կատարել նրանց համար եւ որոշել է այդ հարցով դիմել ՀՅԴ Հայ դատի հանձնախմբին:

«Արցախ այցելելուց հետո ես հանգիստ չմնացի: Որոշել էի, որ ինչ-որ կերպ արցախցի փոքրիկներին պիտի օգնեմ եւ լուսավոր կետ թողնեմ նրանց՝ պատերազմ տեսած մանկության վրա»,- պատմում է Խաչիկը: Եվ առիթը չուշացավ: Ցանկությունն իրականություն դարձավ արդեն 1995-ից: Հունաստանի Հայ դատի հանձնախումբը կարողացավ համոզել Սիրիոս կղզու քաղաքապետին՝ ֆրասիացի երեխաների համար կազմակերպվող ամառային հանգստի ծրագիրն իրականացնել նաեւ Արցախի երեխաների համար: Այդ հարցում մեծ դեր խաղաց Հունաստանի ՀՅԴ Հայ դատի հանձնախումբը: Ծրագրի իրականացմանն աջակցություն ցուցաբերեցին նաեւ Արցախի արտգործնախարարությունը, Կրթության ու գիտության նախարարությունը եւ Հայ օգնության միությունը: Երեխաների ճանապարհածախսը հոգում է ԼՂՀ Կրթության ու գիտության նախարարությունը, իսկ երեխաների՝ Հունաստանում գտնվելու բոլոր ծախսերը հոգում են ՀՅԴ Հայ դատի հանձնախումբը, Հունաստանի իշխանությունները եւ Խաձիկիրյակո՝ Հունաստանի ամենամեծ որբանոցը:

Երեխաների երկշաբաթյա այցը Հունաստան՝ իրականացվում է ծովեզերքին, ծրագրի համար կառուցված փոքր շենքում: Երեխաներն ամեն օր զբոսնում են ծովեզրին, այցելում են տեսարժան վայրեր, ռեստորաններ, ծանոթանում Հունաստանում ապրող հայ եւ հույն պատանիների հետ: Երեխաներին տրվում են բազմազան նվերներ՝ ինչպես իրենց, այնպես էլ ընտանիքի անդամների համար:

«Ծրագրի շրջանակներում Հունաստան են այցելել արցախցի մոտ 500 մանուկներ ու պատանիներ՝ մայրաքաղաքից ու շրջաններից: Ծրագրում ընդգրկվում են արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների, բազմազավակ ընտանիքների, միակողմանի եւ երկկողմանի որբ երեխաներ՝ 8-16 տարեկան,- ասում է Խաչիկը եւ ավելացնում,- ծրագրի իրականացման առաջին տարիների ընթացքում մեզ եւ երեխաների համար շատ դժվար էր: Մեզ համար հեշտ չէր, որովհետեւ ամեն կերպ փորձում էինք լավ մթնոլորտ ստեղծել երեխաների համար, որպեսզի ուրախ ժամանակ անցկացնեն: Երեխաներն առաջին տարիներին գալիս էին լրիվ սեւ շորեր հագած եւ ոչնչով չէին ուրախանում. ոչ մի բանով նրանց չէինք կարողանում զարմացնել: Հաճախ նստում էին ծովի ափին ու տխուր նայում հեռուները: Մի անգամ 12 տարեկան տղայից հարցրի, թե՞ ինչ է մտածում, պատանին խոր շունչ քաշելով պատասխանեց, որ պապիկից հետո տան տղամարդն ինքն է, եւ հիմա անասունների համար խոտ հարելու իսկական ժամանակն է. «Պապիկին մենակ եմ թողել, իսկ նա արդեն ծերացել է, չի կարողանալու պետք եկածի չափ պաշար հավաքի. մտածում եմ, թե ոնց պիտի անասունները յոլա գնան ձմռանը...»:

Խաչիկ Խաչատուրյանը հպարտությամբ ասում է, որ արցախցի պատանիները շատ դաստիարակված, խելացի եւ ընդունակ երեխաներ են: «Նրանք, կարծես, Հունաստան ուղարկված դեսպաններ լինեն,- ծիծաղով ասում է նա,- Արցախ գալուց՝ հանդիպում եմ նրանց: Բոլորին մեկ-մեկ ճանաչում եմ, հիշում եմ բոլորի անունները, նույնիսկ նրանց պատմած պատմություններն ու հիշողությունները՝ ընտանիքի, իրենց հայրերի խիզախությունների մասին...»:

Ծրագիրն ամեն տարի իրականացվում է օգոստոսին, սակայն այս տարի այցը տեղի կունենա ավելի շուտ՝ կապված Սիրիոս կղզում եւ Աթենքում կազմակերպվող համաշխարհային փառատոնի կազմակերպման հետ, որին մասնակցելու են նաեւ Արցախի երեխաները: Նրանց այստեղ նախօրոք պատրաստում են, սովորեցնում ազգային պարեր, երգեր:

Խաչիկ Խաչատուրյանը նշում է, որ Հունաստանի էկոնոմիկայի նախարարությունը նյութական դժվար վիճակի պատճառով խոչընդոտում է ծրագրի իրականացմանը, բայց նրանք ամեն կերպ ջանք են թափում, որպեսզի ծրագիրը շարունակվի: Նա պատմում է, որ Հունաստանն առաջին անգամը չէ, որ օգնում եւ օժանդակում է հայ ազգին: Դեռեւս 1922թ. Թուրքիայից Հունաստան են գաղթել 2000 հայ որբեր: Նրանց համար «Միր իստ լրիվ» ամերիկյան ընկերությունը եւ Հունաստանի իշխանությունները կառուցեցին 2-3 խոշոր որբանոցներ: Եվ վերջերս հայկական որբանոցի տարածքում, որը հիմա օգտագործվում է որպես զորանոց, գտան հայ որբերին պատկանող շորեր, իրեր, որբանոցի հայ տնօրենի նկարները: Դրանք հանձնվեցին Երեւանի Ծիծեռնակաբերդի թանգարանին, որտեղ Հունաստան գաղթած որբերի հիշատակին առանձնացվել է անկյուն:

Հետաքրքիր է, որ 1922թ. Հունաստան գաղթած որբերի մեջ էր նաեւ Խաչիկի հայրը: Խաչիկի տատիկն էլ հայտնի գրող Ռուբեն Սեւակի քույրն է եղել:

Խաչիկ Խաչատուրյանն այս անգամ Արցախ էր այցելել իր 13 տարեկան աղջկա՝ Նաիրիի հետ, ով առաջին անգամ է Արցախում եւ շատ տպավորված է: «Ես անհամբեր կսպասեմ հաջորդ ամռանը, որպեսզի նորից այցելեմ Արցախ»,- ասում է դուստրը: «Ես առանց Արցախի ապրել չեմ կարող. այդ սերը փոխանցում եմ նաեւ ընտանիքիս»,- շարունակում է հայրը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Արցախի շրջիկ տիկնիկային թատրոնը 1 տարեկան է

«Երեք տարի առաջ, նոյեմբերի 20-ին, մի մառախլապատ օր Ստեփանակերտ եկանք: Ծանոթների միջոցով սենյակ էինք գբաղեցրել: Երբ հասանք, տեսանք կիսախարխուլ, կիսանկուղային տուն է: Հայրս մեզ հետ էր: Տունը տեսնելով՝ ասաց՝ եկեք հետ վերադառնանք, այստեղ ապրելու տեղ չէ: Ես պնդեցի, որ մնալու ենք: Երկուսով վստահ էինք մեր կայացրած որոշման մեջ՝ անկախ ամեն ինչից:

Մի քանի օր հետո լավ բնակարան գտանք, իսկ ավելի ուշ մեր սիրելի Շուշի քաղաքում բնակարան գնեցինք»,- ասում է Գոհար Թաթիկյանը ու ավելացնում, որ Արցախում ապրելու գաղափարը նրա մոտ ծագեց, երբ առաջին անգամ Արցախ եկավ եղբոր բանակի երդմնակալության արարողությանը: Հետագայում գաղափարով նաեւ ոգեւորեց ամուսնուն՝ Էդգարին:

«Մենք հանգստություն շատ ենք սիրում: Այստեղ այն տեղն է, ուր մենք շատ մոտ ենք մեր էությանը: Այստեղ ապրում, ստեղծագործում ու վայելում ենք կյանքը: Մեզ եկվոր, վերաբնակիչ չենք համարում: Մենք արցախցի ենք, ովքեր ապրում են Արցախի առօրյայով, լավ ու վատով»,- շարունակում է Էդգար Թաթիկյանը:

Էդգարը ծնվել է Երեւանում, Գոհարը՝ Եղեգնաձորում: Սովորել են Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի դրամատիկական թատրոնի ռեժիսուրա բաժնի նույն կուրսում: Միաժամանակ նաեւ աշխատում էին Երեւանի «Ագուլիս» տիկնիկային թատրոնում:

Արցախ տեղափոխվելուց հետո աշխատանքի անցան Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնում:

«Թատրոնում աշխատելու ժամանակ ներկայացման համար անհրաժեշտ էր տիկնիկներ պատրաստել, իսկ թատրոնը բավարար գումար չուներ դրա համար, որոշեցի հանձն առնել այդ գործը, եւ ստացվեց», - ասաց Գոհարը:

Գոհարն ասում է, որ տիկնիկների նկատմամբ յուրահատուկ մոտեցում ունի:

«Մանկությունս համընկավ պատերազմի եւ հետպատերազմյան ժամանակաշրջանի հետ: Փոքր ժամանակ ես՝ ինչպես հասակակիցներս, տիկնիկներ չունեի, եւ միշտ երազում էի տիկնիկներ ունենալ: Տիկնիկներ ստեղծելով, այսպես ասած, մանկական երազանքս իրականացրի»,- ասում է Գոհարը:

Առաջին տիկնիկի պատրաստման հետ Գոհարի եւ Էդգարի մոտ առաջացավ իրենց շրջիկ տիկնիկային թատրոնի ստեղծման գաղափարը: Թատրոնի շրջիկ լինելու գաղափարը Էդգարինն է, ասում է՝ դրա մեջ ռոմանտիկ բան է տեսնում:

«Նախկինում գրեթե բոլոր թատրոնները շրջիկ էին, այդպիսով բոլորը՝ նույնիսկ ամենահեռավոր գյուղի բնակիչը, հնարավորություն էն ունենում թատրոն հաճախել»,- ասում է Էդգարը:

Իրենց «3 խնձոր» տիկնիկային թատրոնի ծնունդը համարում են հուլիսի 14-ը. հենց այդ օրն էլ առաջին անգամ ներկայացում բեմադրեցին:

Այսօր թատրոնում աշխատում են 4 հոգով՝ Էդգարը պիեսներն է գրում, աշխատում որպես դրամատուրգ եւ դերասան, Գոհարը ռեժիսոր, տիկնիկագործ ու դերասան է: Թատրոնում աշխատում են եւս երկու դերասաններ:

«Օսըմ» հիմնադրամի հովանավորությամբ բեմադրեցին «Արքայադստեր 100 համբույրը»: Տիկնիկային թատրոնով ներկայացումներ են բեմադրել սահմանամերձ գյուղերում՝ Մատաղիս, Թալիշ, Խրամորթ, Ուղտասար:

Պատմում են, որ երեխաները մեծ ոգեւորությամբ էին դիտում ներկայացումը, եւ նշում, որ անհամբեր սպասում էին հաջորդ ներկայացումներին:

«Մենք սիրով ներկայացում կբեմադրեինք նույնիսկ այն գյուղերում, ուր ընդամենը 4 երեխա կա: Պետք է, որ յուրաքանչյուր երեխա, անկախ բնակության վայրից, ունենա թատրոն հաճախելու հավասար հնարավորություններ, սակայն այդ հնարավորությունը, ցավոք սրտի, մենք չունենք՝ ելնելով ֆինանսական կարողությունից»:

Էդգարը ափսոսանքով նշում է, որ միակ խնդիրը լեզվի խնդիրն է, որովհետեւ երեխաները բարբառով են խոսում եւ գրական հայերեն չեն հասկանում:

Թե ինչու թատրոնի անունը «3 խնձոր» կոչեցին՝ Գոհարը պատասխանում է, որ յուրահատուկ ոչինչ չկա: Յուրաքանչյուր հեքիաթի վերջում միշտ նշվում է, որ երկնքից երեք խնձոր է ընկնում, մեկը գրողին, մեկը պատմողին, մեկն էլ լսողին՝ այս դեպքում իրենց պատանի հանդիսատեսին:

Այժմ զույգն աշխատում է «Ով աշխատի՝ նա կուտի» ներկայացման վրա՝ հայկական ժողովրդական մոտիվներով: Ներկայացման մեջ արծարծվելու է, ինչպես հեղինակն է ասում, այսօրվա կարեւորագույն խնդիրները՝ արտագաղթ, անտարբերություն, ծուլություն:

Չնայած բազում խնդիրներին՝ Էդգար ու Գոհար զույգը վստահ է, որ տքնաջան աշխատանքի եւ մի քիչ էլ համբերության դեպքում ամեն բանի հնարավոր է հասնել, եւ կարեւորը՝ հավատում են, որ իրենց ներկան ու ապագան միայն Արցախում է:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

ՀՅԴ ճամբարները որպես կամուրջ հայրենիքի եւ սփյուռքի միջեւ

ՀՅԴ-ի կողմից իրականացվող երիտ-պատանեկան ճամբար-բանակումների ծրագիրը մեկնարկել է 1993 թվականից, երբ Արցախում պատերազմը դեռ ավարտված չէր: Ճամբարների կազմակերպման առաջին տարիների հիմնական նպատակն էր՝ Արցախի պատանիների համար հետաքրքիր առօրյայի ապահովումը:

ՀՅԴ կառույցների կողմից կազմակերպված առաջին պատանեկան բանակումը սկաուտական անվան տակ կայացել է 1994թ. օգոստոսին՝ Մարտունու շրջանի Աշան գյուղում, իսկ առաջին երիտասարդական բանակումը՝ 1993թ. մայիս-հունիս ամիսներին՝ Աշանի «Աբունց չափար» տեղամասում:

Աշան գյուղում ճամբարներ կազմակերպվել են նաեւ 1994 թվականի հուլիս ամսին՝ Արտեմիս Գրիգորյանի, Ալինա Խաչատուր-Մովսեսյանի եւ Արամ Ֆրանկյանի պատասխանատվությամբ:

1994թ. Իրանից Արցախ եկավ կուսակցական ընկեր Վարուժը, ով Պատարա գյուղի դպրոցի տնօրեն, ՀՅԴ անդամ Ռիտա Մնացականյանի եւ Կարեն Արզումանյանի հետ քննարկեց բանակումներ կազմակերպելու հարցը: Եվ, արդեն 1994 թվականի դեկտեմբերին պատանեկան բանակում կայացավ նաեւ Պատարա գյուղի դպրոցում: Բանակումին հիմնական մասնակցում էին Ստեփանակերտի համար 1 դպրոցի եւ Պատարա գյուղի դպրոցի աշակերտները:

«Պատերազմ ապրած պետությունը ի վիճակի չէր պատանիների համար ծրագրեր իրականացնել՝ պատերազմի թողած բացասական երեւույթներից ազատվելու համար: Այդ պատճառով ՀՅԴ կառույցները որոշեցին կազմակերպել ամառային բանակումներ, որոնց նպատակն էր՝ պատանիների համար հետաքրքիր ամառային հանգիստ կազմակերպելը: Պատանեկան բանակումները հնարավորություն տվեցին նորից բարձրաձայնել պետական արժեքների, հայրենասիրության ու ազգասիրության մասին: ՀՅ Դաշնակցությունը այդ պատասխանատվությունը ստանձնեց 1993թ. մինչեւ այսօր, եւ այդ ծրագիրը կկրի շարունակական բնույթ»,- ասում է Ռիտա Մնացականյանը:

ՀՅԴ ծրագրով Արցախի պատանիներին հնարավորություն է տրվել մասնակցելու նաեւ Արցախից դուրս կազմակերպվող բանակումներին:

Ընկերուհի Մարո Քեշիշյանի հայթայթած ֆինանսական միջոցների շնորհիվ Կարկառ գետի մոտակայքում կազմակերպվող ճամբարները կրել են շարունակական բնույթ:

1999-ին Պարսկաստանից եկան Արմոնդ Թահմազյանը, Ժիրայր Շահիջանյանը եւ ուրիշներ, ովքեր դարձան պատանեկան ճամբարների ծրագրի շարունակողները:

Այսօր Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, իր ծրագրային դրույթների համաձայն, երիտասարդական թեւերի հետ համատեղ ամեն տարի ամռանը կազմակերպում է ավանդույթ դարձած բակային ճամբարները:

Պատանեկան ճամբարները նպատակաուղղված են երեխաների մեջ կազմակերպվածության, կարգապահության եւ ազգային ոգու սերմանմանը: Ճամբարները նաեւ հնարավորություն են տալիս կապ հաստատել սփյուռքում եւ հայրենիքում ապրող երիտասարդների միջեւ, առիթ են ընձեռում, որպեսզի սփյուռքահայ երիտասարդներն ավելի մոտիկից եւ ավելի լավ ծանոթանան հայրենիքում առկա խնդիրներին:

Ճամբարների ծրագրերը շատ լայն, հետաքրքիր ու բազմազան են: Երեխաներին ուսուցանում են ազգային, հայրենասիրական երգեր, հայոց պատմություն, կազմակերպում են զանազան հետաքրքիր խաղեր, ֆիլմի դիտումներ, ձեռագործություն եւ այլն:

Հայ Յեղափոխական Դաշնակցության երիտասարդական միությունների ջանքերով ամեն ամառ Արցախում կյանքի կոչվող պատանեկան ամառային ճամբարներին մասնակցելու հնարավորություն են ունենում արցախցի մոտ 1000 պատանիներ: Ճամբարին կարող են մասնակցել 9-16 տարեկան պատանիներ: Ամառային ճամբարի տեւողությունը 2 շաբաթ է:

Արդեն 11 տարի է, ինչ Լիբանանի «Զավարյան» ուսանողական միությունը (ԶՈՄ) Արցախում իրականացնում է տարբեր ծրագրեր, այդ թվում նաեւ՝ կազմակերպում է պատանեկան ճամբարներ «Քաշաթաղն իմ հայրենիքն է» ծրագրով: «Զավարյան» ուսանողական միության կողմից կազմակերպված ճամբարների աշխարհագրությունը շատ հստակ է. նրանք 10 տարի շարունակ գործունեություն են ծավալում եւ ճամբարներ են կազմակերպում Քաշաթաղի շրջանի տարբեր համայնքներում:

«Ամառային ճամբարների ծրագրին մասնակցող սփյուռքահայ երիտասարդներս ծրագրի շրջանակներում տեսնում ենք Հայրենիքի այս հրաշք մասնիկը՝ Արցախը Արցախը, ծանոթանում եւ մասնակցելով այս ծրագրին, մեր կապը հայրենիքի հետ ավելի է ամրապնդվում:

Այս ճամբարները յուրօրինակ կամուրջ են ստեղծում Սփյուռքի, Հայրենիքի ու Արցախի երիտասարդների միջեւ: Ծրագրի շրջանակներում հայրենիք են վերադարձել եւ հաստատվել մոտ 10 երիտասարդ: Մյուս ընկերները խոստացան ուսումը ավարտելուց հետո նույնպես հայրենիքում հաստատվել»,- ասում է ճամբարների շնորհիվ Արցախն ու Հայաստանը ճանաչած եւ արդեն Հայաստանում հաստատված Փաթիլ Ասլանյանը:

Արեւմտյան Ամերիկայի ՀՅԴ երիտասարդական միությունը ճամբարների ծրագրերն անց է կացնում 2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում, իսկ 2010 թվականից՝ նաեւ Արցախում: Մտահղացումը տվել են դաշնակցական երիտասարդներ Սոսեն եւ Ալենը: Հայրենադարձներ Սոսեն եւ Ալենը Հայաստանում ամուսնանալուց հետո անմիջապես հաստատվեցին հայրենիքում՝ օրինակ ծառայելով տասնյակ այլ երիտասարդների համար: Ցավոք, ավտովթարը խլեց երիտասարդ հայրենադարձների կյանքը:

Արեւմտյան Ամերիկայի ՀՅԴ երիտասարդական միության ծրագրի շրջանակում ճամբարներ են կազմակերպվել Ստեփանակերտում, Շուշիում, Ասկերանում եւ Մարտունիում: Արեւմտյան Ամերիկայի ծրագրին անցյալ տարի միացել են նաեւ Հոլանդիայից 3 ընկերուհի:

Մեկ տարի շարունակ ՀՅԴ միությունների անդամները տարբեր ձեռնարկներ են կազմակերպում, որպեսզի իրականություն դարձնեն Արցախում ամռանը ճամբար կազմակերպելու ցանկությունը:

Արցախում ամառային ճամբարներ կազմակերպելու նախաձեռնությանը միացել է ԼԵՄ-ը (Լիբանանի երիտասարդական միությունը)՝ ճամբարներ իրականացնելով Մարտունիում եւ Շուշիում՝ «Անուշ Հայրենիք» խորագրով:

Արդեն 3-րդ տարին է, ինչ ամառային ճամբարների ծրագրից է կազմված նաեւ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միությունը:

«Սփյուռքի ՀՅԴ կառույցների կողմից Արցախում կազմակերպելով ամառային ճամբարներ՝ նպատակ ունեն արցախցի պատանիների ամառային արձակուրդները հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելու: Միեւնույն ժամանակ՝ միտված են Սփյուռքի եւ Արցախի երիտասարդների միջեւ ամուր կապ հաստատելուն»,- ասում է Ֆրանսիայի ՀՅԴ «Նոր սերունդ» երիտասարդական կազմակերպության անդամ, Ֆրանսիայի կողմից Արցախում իրականացվող ճամբարի գլխավոր պատասխանատու Հարութ Շիրինյանը:

Այս տարի Արցախում նախատեսվում է իրականացնել 6 պատանեկան ճամբարներ, որոնք կկազմակերպվեն Ստեփանակերտում, Շուշիում, Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքում, Մարտունիում եւ Քաշաթաղի շրջանի Միջնավան համայնքում:

Ճամբարներն արդեն մեկնարկել են Ստեփանակերտի թիվ 2 դպրոցում եւ Ասկերանի շրջանի Ատղաշեն համայնքում:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Քրիստոսի պայծառակերպություն, Այլակերպություն կամ Վարդավառ

Քրիստոսի Պայծառակերպությունը կամ Վարդավառը Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է եւ խորհրդանշում է Քրիստոսի պայծառակերպությունը Պետրոս, Հովհաննես եւ Հակոբոս առաքյալների առջեւ, որն, ըստ ավանդության, տեղի է ունեցել Թաբոր կոչված լեռան վրա:

Այս տարի Հայ Առաքելական Եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպությունը նշում է հուլիսի 12-ին: Վարդավառը տոնում են Սուրբ Զատիկին հաջորդող 14-րդ կիրակի օրը՝ Զատիկից 98 օր հետո, կարող է ընկնել հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հայաստանյաց եկեղեցում տոնը կոչվում է նաեւ Այլակերպության տոն կամ Վարդավառ:

Ինչո՞ւ է տոնը Վարդավառ կոչվում: Տիրոջը վարդի հետ համեմատելու պատճառով: Ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում՝ նախքան բացվելը, այդպես էլ Տերը, նախքան Իր պայծառակերպվելը, պահում էր Իր մեջ Աստվածության պայծառությունը: Եվ, ինչպես վարդը բացվելով բոլորին հայտնապես երեւում է, այդպես էլ մեր Տերն այսօր պայծառակերպվելով՝ հայտնում է Իր Աստվածությունը:

Վարդը փշերի մեջ է բուսնում, այդպես էլ մեր տերը հրեաների մեջ երեւաց, ովքեր էլ խաչեցին Նրան: Վարդն անուշահոտություն է բուրում, այդպես էլ մեր Տիրոջ պայծառակերպությունից անուշահոտություն բուրեց, որից աշակերտները թմրելով ընկան խոր քնի մեջ:

Իսկ նախնիներն այդ տոնը Վարդավառ անվանեցին, որովհետեւ վարդը, քանի դեռ կոկոն է, ո՛չ իր գեղեցկությունը եւ ո՛չ էլ իր անուշահոտությունն է հայտնում, իսկ ժամանակի լրանալուն պես քաղցրությունից շարժվելով փթթում է եւ իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Այդպես էլ Քրիստոս կուսական արգանդում սնվեց ու զարգացավ՝ ինչպես կոկոն, եւ ապա ծնվելով՝ աստղերով ու հրեշտակներով հայտնվեց

մոգերին ու հովիվներին, իսկ հասնելով կատարյալ հասակին՝ հայտնվեց մարդկանց նշաններով ու սքանչելիքներով:

Տերը մարմնի վարագույրով ծածկվելով՝ ինչպես կոկոն, այսօր բացվելով հայտնեց հայրենի փառքը, իսկ անուշահոտության բուրմունքով՝ Աստվածությունը:

Վարդն ունի երեք որակ. կարմրություն, սպիտակություն եւ անուշահոտություն, ինչը խորհրդանշում է Երրորդությունը: Իսկ Քրիստոսի տնտեսության խորհրդում կարմրությունը խաչի վրա թափված արյունն է, սպիտակությունը՝ անմեղությունը, իսկ անուշահոտությունը՝ Հոգին, որ փչեց առաքյալների վրա՝ ասելով. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Եվ դա ըստ այս խոսքի. «Իմ սիրեցյալը սպիտակ է եւ կարմիր, ընտրյալ է՝ տասը հազարից» (Երգ Ե 10):

Այսօր առաքյալները կարգվեցին ուսուցիչ ու վարդապետ ողջ աշխարհի համար, եւ Տերն այսօր համբերության ու աղքատության դաս տվեց աշակերտներին Մովսեսի ու Եղիայի միջոցով, որպեսզի աշակերտները նրանց նման լինեն:

Վարդավառը տոնել են նաեւ հեթանոս հայերը, այդ պատճառով էլ պահպանվել են տոնի հեթանոսական սովորույթները՝ միմյանց վրա ջուր ցողելը, աղավնի թռցնելը եւ այն:

Տիրոջ Պայծառակերպության տոնին միմյանց վրա ջուր լցնելու ավանդույթը 5000 տարվա պատմություն ունի, որի վերաբերյալ կա մի հին ավանդույթ, որ թերեւս սկզբնավորվել է ջրհեղեղը վերապրած մարդկության միջավայրում: Վարդավառի տոնը կապվում է Ջրհեղեղի եւ Նոյի տապանից իջնելու հետ, իսկ միմյանց վրա ջուր ցանելը, աղավնի բաց թողնելը դիտվում է իբրեւ Ջրհեղեղն ու նրանից ազատվելը հիշատակող կամ խորհրդաբանող արարողություն: Իսկ ազգագրագետների մեկնաբանությամբ՝ հեթանոսական Հայաստանում Վարդավառը կապված է եղել գեղեցկության եւ սիրո աստվածուհի Աստղիկի եւ Վահագն աստծո սիրո պատմության հետ: Վարդեր նվիրելով եւ ջուր լցնելով՝ Աստղիկը սեր էր տարածում ողջ Հայաստանում, իսկ Վահագնը, մշտապես պայքարելով չարի դեմ, պաշտպանում էր այդ սերը...

Հաշվի առնելով այն փաստը, որ հատկապես վերջին տարիներին մեզանում միմյանց վրա ջուր ցողելու եւ իրար վարդեր նվիրելու փոխարեն փողոցում անսպասելիորեն սառը լոգանք ընդունելու սովորությունն է զարգանում, այսօր մնում է միայն ներողամիտ ժպտալ, մի լավ ծիծաղել ու մտածել, որ անհարմար վիճակում մենակ դուք չէ, որ հայտնվել եք:

Նշենք նաեւ, որ Քրիստոսի Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթին համարվում է մեռելոց:

«ԱՊԱՌԱԺ»

Աֆորիզմներ

Անձի ազատությունը մի կարեւոր չգրված սահմանափակում ունի՝ չանել ոչինչ, ինչը կարող է վնասել ուրիշին:

***

Երբ արատը անարգելք արմատավորվում է, սովորականի իրավունք է ձեռք բերում:

***

Երբեմն օրենքը վատ մեկնաբանողների պատճառով վերածվում է անօրինականության:

***

Անմեղ, անպաշտպան մարդուն տառապանք պատճառողը ներման ենթակա չէ:

***

Ազատության ու սանձարձակության միջեւ տարբերություն չտեսնող մարդկանց համար բարոյականության օրենքներն իզուր են:

***

Ժամանակին չուղղված, թեկուզ փոքր սխալը կարող է մեծ անախորժությունների ու աղետի պատճառ դառնալ:

***

Երբ օրենքը եւ բարոյականությունը հակասության մեջ են հայտնվում, նշանակում է օրենքը անբարո է:

***

Սխալվողի սխալը երբ չի ուղղվում, նրա հանցագործ դառնալը բացառված չէ:

***

Հասկացող ու զգայուն մարդու համար ուրիշի վշտին կարեկցելը, հույս ու հավատ դառնալը հոգու պահանջ է:

***

Այնտեղ, որտեղ ճշմարտությունը հարգի չէ, արդարությունը տեղ չունի:

***

Բացառված չէ, որ որեւէ անօրինականության արմատ հայտնաբերվի ոչ կատարյալ օրենքում:

***

Երբեմն անհամատեղելիություն հայտնվում է ծնող-զավակ փոխհարաբերություններում:

***

Կյանքը որքան էլ դառնություններ, տառապանքներ ունենա, ապրելու իղձն ու պայքարը մարդուն չեն լքում, կոփում են:

***

Առանց սոցիալական արդարության՝ ժողովրդավարության առկայության մասին խոսելն ավելորդ է:

***

Նա, ով մեծ հարստություն ունի, անշուշտ, իշխանություն էլ ունի:

***

Մենակ լինելն այնքան չէ վատ, որքան մարդկանցով շրջապատված լինելը, բայց մենակություն զգալը:

***

Օրենքի գերակայությունը ոմանց համար՝ չկանխարգելված անօրինականությանը որեւէ ձեւով «օրինական» բնույթ տալ է նշանակում:

***

Մարդկությունը երջանիկ կապրի այն ժամանակ, երբ բանակ պահելու կարիք էլ չի լինի:

***

Հովանավորվող օրինախախտների զոհերը անպաշտպան ճշմարտություններն են լինում:

***

Անարդար բթամիտ ուժի դիմաց իմաստունի արդարությունն է անզոր:

***

Անհրաժեշտությունը պարտադրելու մեծ ուժ ունի:

***

Երբ նորմալ ապրուստ չի ստեղծվում, «պայծառ ապագա» խոստանալը միշտ կա:

***

Ճիշտ խոսելու եւ ճիշտ գործելու միջեւ երբեմն խիստ հակասություն է լինում:

***

Երբ օրենքի ուժը չի գործում, բացառված չէ ուժի օրենքը:

***

Աղքատ բովանդակությանը ճոխ ձեւը ոչինչ չի կարող ավելացնել:

ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀՅԴ Արցախի կառույցն իր խորին վշտակցությունն է հայտնում ՀՅԴ Ստեփանակերտի «Արթուր Մկրտչյան» կոմիտեի անդամ Գագիկ Խաչատրյանի ընտանիքին՝ սիրելի հոր՝ Ռազմիկ Խաչատրյանի մահվան առիթով:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ